Հաշվետվություն

1. **Անունը, ազգանունը.**

Կարեն Բաբասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ ԱԻՆ ՓԾ բնակչության պաշտպանության և աղետների հետևանքների վերացման կազմակերպման վարչության աղետների հետևանքների վերացման պլանավորման, կանխատեսումների և ծրագրավորման բաժնի ավագ հրահանգիչ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Սերբիայի Հանրապետություն ս.թ. փետրվարի 25-ից մարտի 2-ը:

4. **Հրավիրող կողմը.**

ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համակարգման եվրատլանտյան կենտրոն:

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցել ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համակարգման եվրատլանտյան կենտրոնի հետևանքների կառավարման «SERBIJA-2018» վարժանքի հիմնական պլանավորման համաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

Համաժողովի ընթացքում քննարկվել է վարժանքի սցենարի, աշխատանքային տեղամասերի, ընդունող երկրի աջակցության վերաբերյալ հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Վարժանքի ղեկավարման խմբի փակ հանդիպման ժամանակ բարձրացվել են թիմին ճամբարային ավանում ընդունելու և կացության համար անհրաժեշտ միջոցներով (վրան, լուսավորություն, ջեռուցում և այլն) ապահովելու վերաբերյալ հարցեր:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել մինչև ս.թ. հունիսի 29-ը ՆԱՏՕ-ի Աղետների արձագանքման համակարգման եվրատլանտյան կենտրոն

ներկայացնել ՀՀ ԱԻՆ թիմերի կողմից վարժանքի մասնակցության նպատակով Սերբիայի Հանրապետություն ուղարկվող անձնակազմի ցուցակը, գույքի ցանկը, ընդունող երկրի կողմից աջակցության հայտը և գույքի տեղափոխման համար անհրաժեշտ ծախսերի նախնական հաշվարկը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

ՀՀ ԱԻՆ կողմից մասնակցելու նպատակով ներկայացվել է հայտ հետևյալ բովանդակությամբ՝

քաղաքային որոնողափրկարարական թիմ – 10 հոգի,

ճառագայթային քիմիական կենսաբանական մոնիթորինգի իրականացման թիմ - 5 հոգի,

ջրասուզական թիմ – 3 հոգի,

ղեկավարման կազմ – 2 հոգի,

գնահատողներ – 2 հոգի,

միջազգային ուժերի համակարգման կենտրոն (OSOCC) – 2 հոգի:

10. Գործուղվողը.

Կարեն Բաբասյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը.

14.03.2018թ.